

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Առափիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը հայտարարում է մրցույթ հաստատության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
2. Բարձրագույն կրթությունը,
3. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ),
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում),
6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենների հետ պարտադիր ներկայացնել նաև բնօրինակները:

Փաստաթղթերն ընդունվում են 2018թ. հուլիսի 21-ից մինչև 2018թ. օգոստոսի 20-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10⁰⁰-ից մինչև 15⁰⁰, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Առափիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. օգոստոսի 29-ին, ժամը 12⁰⁰-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Առափիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ.Առափի:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-304789 հեռախոսահամարով: